Հաստատում եմ՝
Հ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր
պրոֆեսոր Մելքումի Գևորգյան
26.06.2024

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ասպղիկ Սերգոյի Հայրապետյանի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

20-րդ դարի երկրորդ կեսից մինչ օրս Մերձավորարևելյան թնջուկի լուծման ուղիների փնտրտուքը շարունակում է մնալ ինչպես ԱՄՆ-ի արտաքին քաղաքական, այնպես էլ միջազգային հարաբերությունների առանցքային հարցերից: Առավել ևս, որ տասնամյակներ շարունակ Մերձավոր Արևելքը եղել, այսօր էլ համարվում է աշխարհի բազմաշերտ հակասություններով ամենապայթունավտանգ տարածաշրջանը, որտեղ խաչվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային հարաբերություններում հիմնական դերակատարների շահերը:

Դեռ Երկրորդ աշխարհամարտի տարիներից ԱՄՆ-ի շարունակական ներգրավումը համաշխարհային քաղաքականության մեջ նախանշեց երկբևեռ աշխարհակարգի ձևավորումը: Սառը պատերազմի տարիներին սա պայմանավորեց ԱՄՆ-ի զսպման քաղաքականությունը՝ արտահայտելով տարածաշրջանային մակարդակներում՝ ազդեցության գոտիների բաժանմամբ: Այս համապատկերում առանձնահատուկ տեղ ունի Մերձավորարևելյան տարածաշրջանը, որն աստիճանաբար վերածվել է ուժային կենտրոնների շահերի բախման կիզակետի:

Այս համապատկերում Ջ. Բուշ կրտսերի նախագահության տարիներին ԱՄՆ-ի Մերձավորարևելյան քաղաքականության համակողմանի և խորքային վերլուծությունը արդիական է, որին էլ նվիրված է գրախոսվող ատենախոսությունը:

Կարծում ենք, թեման արժևորված է նաև մեկ այլ՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական բազմաբնույթ հայեցակարգերի, դրանց իրականացման մեթոդաբանության մասին որոշակի ընկալումների և պատկերացում կազմելու տեսանկյունից: Առավել ևս, որ եվրոպական, ասիական, հարավկովկասյան կամ այլ տարածաշրջաններում աշխարհաքաղաքական իր ազդեցությունը մեծացնելու, այս կամ երկրի ներքաղաքական կյանքին տարաբնույթ միջամտությունների, «ժողովրդավարական» արժեքների խթանման համար պայքարը այսօր էլ շարունակում է համարվել ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գերակայություններից:

Ատենախոսը հստակորեն ձևակերպել է հետազոտության նպատակը և խնդիրները՝ իրավացիորեն վեր հանելով ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության յուրահատկությունները 21-րդ դարասկզբին, Ջ. Բուշ կրտսերի հայեցակարգի էությունը և վերջինիս գործիքակազմի կիրարկումը մերձավորարևելյան քաղաքականության համապատկերում:

Սույն աշխատանքն արդիական է նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հիմանդրույթների մշակման և Հայաստան-ԱՄՆ-Արաբական երկրներ հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության կարևորությունն ու արաբական մի շարք երկրների հետ գործընկերային հարաբերությունների առկայությունը:

Ատենախոսությունը օգտակար կարող է լինել նաև ՀՀ բուհերի համապատասխան մասնագիտությունների ուսումնական ծրագրերի իրականացման համար:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով: Հեղինակը, հենվելով հայերեն, ռուսերեն, անգլերեն բազմաբնույթ գրականության վրա, օգտագործով տարբեր հիմնախնդիրների լուծման նկատմամբ զանազան մոտեցումների համադրման մեթոդը, համակողմանի վերլուծել ու ներկայացրել ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության առանձնահատկությունները Ջ. Բուշ կրտսերի կառավարման տարիներին:

Խնդրո առարկա թեման ժամանակագրական առումով ևս հիմնավորված է, բավական ընդգրկուն և լեցուն բազմաշերտ իրադարձություններով: Ուսումնասիրվող

թեման մեր իրականության մեջ իր բովանդակությամբ և հարցադրումներով նախկինում համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել:

Արժևորված են ատենախոսի կողմից օգտագործված սկզբնաղբյուրները, տարաբնույթ և բազմալեզու գիտական գրականությունը:

Ատենախոսության սկզբնաղբյուրների, գրականության ցանկը նույնպես կազմված է գիտական սկզբունքով:

Պետք է նշել ատենախոսության թեմայի կիրառական նշանակության մասին: Այն օգտակար հետազոտություն է ոչ միայն պատմաբանների, ցեղասպանագետների, միջազգայնագետների, քաղաքագետների, այլև մեր երկրի արտաքին քաղաքական գերատեսչության համար: Ատենախոսությունը օգտակար կարող է լինել նաև ՀՀ բուհերի համապատասխան մասնագիտությունների ուսումնական ծրագրերի իրականացման համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են համապատասխան ենթագլուխների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածական բաժնում հեղինակը համակարգված ձևով ներկայացրել է թեմայի ուսումնասիրման արդիականությունը, կարևորությունը, առաջ քաշված խնդիրները, նպատակները, հիմնավորել թեմայի ժամանակագրական սահմանները, ներկայացվել են ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության փոփոխման միտումները 1990-ական թվականներին», քննության են առնվում «Միաբևեռ աշխարհակարգի ձևավորումը ըստ Pax Americana հայեցակարգի և դրա դրսևորումը Մերձավոր Արևելքում», նոր աշխարհակարգի պայմաններում ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները և իրականացման ուղենիշները: Վեր են հանվում «ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության օրինակարգության իրավական հիմքերը» և իրավապայմանագրային գործիքակազմը:

Երկրորդ գլխում՝ ««Բուշի դոկտրինի» իրագործումը Մերձավոր Արևելքում», համակողմանի վերլուծվել է «ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման

նորպահպանողականների մոտեցումները» և ուսումնասիրվել նորպահպանողականության տարբերակիչ առանձնահատկությունները, ակունքները, նրանց հայաքները ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման հարցում, Ջ. Բուշի մերձավորարևելյան քաղաքականության վրա նորպահպանողականների ունեցած ազդեցությունը և վերջինիս տրված քննադատական գնահատականը, ինչպես նաև տրվել է Ջ. Բուշ կրտսերի նախագահության տարիներին ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունների ընդհանուր գնահատականը:

«Ահաբեկչության դեմ պատերազմը» և «Ժողովրդավարության ներդրման» փորձերն արաբական Արևելքում (Իրաքի օրինակով)» վերջին՝ երրորդ գլխում ներկայացվել են «Ահաբեկչության դեմ պատերազմի» համատեքստում Իրաքյան ռազմագործողության նախապատրաստական փուլը, ռազմական գործողությունների ծավալմանը նախորդած ներքին և արտաքին քաղաքական բանավեճերը, «Ահաբեկչության դեմ պատերազմի» շրջանակում Իրաքյան ռազմափուլի խթան հանդիսացած գործոնները, Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողովի եզրակացությունները: Այս գլխում վերլուծվել է Ջ. Բուշ կրտսերի ամերիկյան արտաքին քաղաքական հայեցակարգերում ժողովրդավարության խթանման խնդիրը, ինչպես նաև փոխակերպական դիվանագիտության էությունը:

Եզրակացությունների բաժնում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները:

Արժևորելով ատենախոսի կատարած ծավալուն և կարևոր ուսումնասիրությունը, այսուհանդերձ, հարկ ենք համարում ներկայացնել որոշ նկատառումներ և դիտարկումներ, որոնց հաշվի առնելը կարող է օգտակար լինել ատենախոսին՝ աշխատության հետագա հրատարակման դեպքում:

1. Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժման նախապատրաստման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման կեղծ տեղեկությունների, ահաբեչկության դեմ համակարգված պայքարի և ժողովրդավարության խթանման քաղաքականության համապատկերում առավել մեծ տեղ հատկացվեր նաև միջազգային այլ դերակատարների, այդ թվում ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների հակասական դիրքորոշումների՝ հատկապես Իրաքի խաղաղ զինաթափման հարցում, խորքային պատճառներին (էջ 104):

2. Էներգետիկ գործոնը արդի աշխարհաքաղաքական գործընթացներում ունեցած իր դերակատարմամբ այն կարևորագույն օղակն է, առանց որի տրամաբանությունը հաշվի առնելու կամ հասկանալու, միջազգային ու աշխարհաքաղաքական գործընթացների կանխատեսումը արդի փուլում չափազանց բարդ է: Կարծում ենք, ատենախոսը պետք է պատշաճ տեղ հատկացներ նավթային գործոնի, էներգետիկ ռեսուրսների վերահսկման ամերիկյան հայեցակարգերի և արաբական երկրների դիրքորոշման շարժառիթների և նպատակների վերլուծությանը (օր. էջ 106-107):
3. Կարևորելով ատենախոսի կողմից հիմնախնդրի վերաբերյալ ամբողջական և համապարփակ պատկերացում կազմելու նկատառումով ժամանակագրական շրջանակներից դուրս գալու մոտեցումը՝ այնուամենայնիվ կարծում ենք, հեղինակը երբեմն շեղվել է իր հիմնական խնդիրներից և անհարկի մանրամասնել, օրինակ՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի՝ արաբ-իսրայելական խաղաղության գործընթացի շրջանակներում ընդունած բանաձևերը, Խաղաղության գործընթացում ձեռք բերված համաձայնությունները (էջ 38-54), երրորդ գլխի «ժողովրդավարության ներդրումը» որպես ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության գերակա ուղղություն և վերջինիս առանձնահատկությունները» ենթագլուխը (էջ 116-123), ըստ էության, շեղվում են ժամանակագրական շրջանակներից:
4. «Ամերիկյան խաղաղություն» հայեցակարգը ներկայացնելիս, ատենախոսը Իրանի և Իրաքի նկատմամբ «կրկնակի զսպման» քաղաքականության (էջ 33-34), ԱՄՆ-ը տարբեր նախագահների դոկտրինների առանձնահատկությունները վերլուծել է հիմնականում Իրաքի օրինակով, մինչդեռ Մերձավորարևելյան կարևոր դերակատար հանդիսացող Իրանի պարագայում ԱՄՆ-ի քաղաքականության յուրահատկությունների, պարբերաբար փոխակերպումների, հակազդման և հակակշռման մեխանիզմների վերաբերյալ թերի է ներկայացված:
5. էջ 53-ում ատենախոսը իրավացիորեն նշում է միաբևեռայնության ձևավորումից ի վեր ԱՄՆ-ի դերը Մերձավոր Արևելքի քաղաքական հիմնախնդիրների առնչությամբ, այդ թվում և ԱՄՆ-ՄԱԿ փոխգործակցության առումով, երկակի էր և ՄԱԿ-ի որոշումների ու բանաձևերի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումը փաստացի գերակայություն ուներ: Այս տեսանկյունից ճիշտ կլիներ, եթե հեղինակը հիմնախնդիրը դիտարկեր նաև սառըպատերազմյան համապատկերում և վերլուծեր երկբևեռ աշխարհակարգի պայմաններում միջազգային խաղաղության և անվտանգության, միջէթնիկ և

միջազգային հակամարտությունների կարգավորման, մարդասիրական ու խաղաղարար առաքելությունների գործում ՄԱԿ-ԱՄՆ երկակի հարաբերությունների բազմաշերտ պատճառները:

6. Արժևորելով ատենախոսի կողմից հարուստ սկզբնաղբյուրների օգտագործման հանգամանքը, «Ամերիկյան խաղաղություն» հայեցակարգի, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության պլանավորման և իրականացման, Բուշի հայեցակարգի առանձնահատկությունների վերաբերյալ անվանի քաղաքագետների, միջազգայնագետների, փորձագետների և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ռազմավարների գնահատականը և վերլուծությունը՝ այնուամենայնիվ, հասկանալի չէ հեղինակի կողմից տասնյակ էջերով իրար հաջորդող մեջբերումների առատությունը, փոխարենը պետք է պարբերաբար ներկայացներ իր վերլուծությունը կամ տեսակետները այս կամ այն հարցի վերաբերյալ (օր. էջ 68-78, 84-91, 120-128):
7. ԱՄՆ-ի Մերձավորարևելյան քաղաքականության առանձնահատկությունները, Ջ. Բուշի դոկտրինը ներկայացնելիս ատենախոսը պետք որոշակի տեղ հատկացներ նաև Չինաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանի քաղաքական գործընթացներում ներգրավվածության մեծացման և դերակատարման ամրապնդմանն ուղղված ԱՄՆ-ի հակազդման մեխանիզմներին և «զսպման ռազմավարության» հայեցակարգին:
8. Ատենախոսությունը զերծ չէ նաև եզրույթների կամ հասկացությունների ոչ հայերեն համարժեքների կիրառումից և տեխնիկական վրիպակներից:

Ամփոփելով՝ վերոնշյալ նկատառումները հիմնականում ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և չեն ստվերում Աստղիկ Հայրապետյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքները:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Այսպիսով, Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)» խորագրով թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ինքնուրույն ուսումնասիրություն: Հետազոտության արդյունքները պատմագիտության և պատմության դասավանդման ոլորտի համար ունեն կարևոր նշանակություն: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված չափորոշիչներին, և հեղինակն արժանի է իր հայցած *Է.00.02-«Համաշխարհային պատմություն»* մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2024 թվականի հունիսի 26-ի նիստում, որին մասնակցել են ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Ա. Քոսյանը, ամբիոնի դոցենտներ, պատմական գիտությունների թեկնածուներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, Գ. Մարգարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Պապոյանը:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ պ. գ. դ., պրոֆեսոր՝ Խ. Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՄՀ գիտքարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Մ. Իսպիրյան